



*Բովանդակություն*

*Կասկածյալի, մեղադրյալի և դատապարտված անձանց արտաքին աշխարհի հետ  
հաղորդակցվելու իրավունքի վերաբերյալ ընդանուր դրույթներ ..... 3*

*Կալանավորված և ձերբակալված անձանց մերձավոր ազգականի և օրինական  
ներկայացուցչի հետ տեսակցության իրավունքի սահմանափակման վերաբերյալ..... 6*

*Կալանավորված և ձերբակալված անձանց մերձավոր ազգականի և օրինական  
ներկայացուցչի հետ տեսակցության իրավունքի երաշխիքների վերաբերյալ..... 11*

*Դատապարտված անձանց տեսակցության իրավունքի վերաբերյալ ..... 14*



2017թ. հուլիսի 3-ին թիվ 2-0310 գրությամբ առաջարկություններ և դիտողություններ ստանալու նպատակով ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի (այսուհետ՝ Պաշտպան) աշխատակազմի կողմից ՀՔԱ Վանաձորի գրասենյակ ՀԿ ներկայացվել է «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին», «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների և «Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. օգոստոսի 3-ի թիվ 1543-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծերը (այսուհետ՝ Նախագիծ):

Սույն փաստաթղթում ներկայացվում է ՀՔԱ Վանաձորի գրասենյակ ՀԿ դիրքորոշումը Նախագծով առաջարկվող կարգավորումների և ազատագրված անձանց վերաբերյալ վերհանված այլ խնդիրների մասին:



*Կասկածյալի, մեղադրյալի և դատապարտված անձանց արտաքին աշխարհի հետ  
հաղորդակցվելու իրավունքի վերաբերյալ ընդհանուր դրույթներ*

Նախագծով առաջարկվում է Հայաստանի Հանրապետության 1998թ. հուլիսի 1-ի քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրք) 65-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 9<sup>1</sup>-րդ կետով.

«9<sup>1</sup>) կալանքի տակ գտնվելու ընթացքում անարգել տեսակցել իր մերձավոր ազգականի և օրինական ներկայացուցչի հետ՝ բացառությամբ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերի»:

Համընդհանուր և տարածաշրջանային միջազգային պայմանագրերով սահմանված իրավակարգավորումների, մարդու իրավունքների միջազգային իրավական պաշտպանության կոնվենցիոն մարմինների, դատարանների իրավական դիրքորոշումների համաձայն՝ որոշակի ժամկետով կամ անժամկետ ազատությունից զրկված անձինք (*կասկածյալներ, մեղադրյալներ և դատապարտյալներ*) շարունակում են մնալ միջազգային իրավունքի նորմերի, սկզբունքների և մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների մասին միջազգային պայմանագրերի պաշտպանության ներքո:

ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե) Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի (այսուհետ՝ Դաշնագիր) 10-րդ հոդվածի Ընդհանուր մեկնաբանությունում վերահաստատեց, որ հաշվի առնելով այն սահմանափակումները, որոնք անխուսափելի են փակ միջավայրում՝ ազատությունից զրկված անձինք շարունակում են օգտվել Դաշնագրում ամրագրված բոլոր իրավունքներից<sup>1</sup>:

Բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոնների համաձայն՝ ձերբակալվածները և առանց մեղադրանք առաջադրելու բանտում պահվող անձինք ունեն արտաքին աշխարհի հետ հաղորդակցվելու իրավունքի նույն պաշտպանությունը, որը տրամադրվում է կալանավորված անձանց և դատապարտյալներին<sup>2</sup>:

<sup>1</sup> Տե՛ս HRC, general comment No. 21, Article 10 U.N. Doc. HRI/GEN/1/Rev.9 (2008), of 10 April 1992, para 3, p. 202

<sup>2</sup> Տե՛ս Standard Minimum Rules for the Treatment of Prisoners. Adopted by the First United Nations Congress on the Prevention of Crime and the Treatment of Offenders, held at Geneva in 1955, and approved by the Economic and Social Council by its resolutions 663 C (XXIV) of 31 July 1957 and 2076 (LXII) of 13 May 1977. <http://www.ohchr.org/Documents/ProfessionalInterest/treatmentprisoners.pdf>



Կոմիտեի իրավական դիրքորոշման համաձայն՝ ազատությունից զրկված անձինք չեն կարող ենթարկվել այլ սահմանափակումների, որոնք պայմանավորված չեն ազատարկման արդյունքում առաջացած իրավական հետևանքներով, բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոնները *inter alia* պետք է կիրառվեն նրանց նկատմամբ<sup>3</sup>:

ՄԱԿ-ի բանտարկյալների հետ վարվեցողության հիմնական սկզբունքները սահմանում են, որ բացառությամբ այն սահմանափակումների, որոնք ակնհայտորեն պայմանավորված են ազատագրկման փաստով՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում, Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրում (...) և ՄԱԿ-ի այլ կոնվենցիաներում ամրագրված իրավունքները և հիմնարար ազատությունները վերագրելի են բոլոր բանտարկյալներին<sup>4</sup>:

Բանտարկյալների կողմից որոշակի սահմանափակումներով մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների իրացման սկզբունքը կապված է այն գաղափարի հետ, որ բանտարկյալները որպես կանոն վերադառնում են հասարակություն և պետք է վերաինտեգրվեն որպես օրինապահ քաղաքացիներ: Հետևաբար, շփումը արտաքին աշխարհի հետ հասարակությունում վերինտեգրման բաղկացուցիչ մասն է: Բանտարկյալների հետ վարվեցողությունը պետք է հիմնված լինի ոչ թե նրանց հասարակությունից օտարելով, այլ ապահովելով շարունակական մասնակցությունը<sup>5</sup>:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ ՄԻԵԴ) նշում է, որ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի (այսուհետ՝ ՄԻԵԿ) 5-րդ հոդվածով իրավաչափ համարվող ցանկացած կալանք իր բնույթով հանգեցնում է անձնական և ընտանեկան կյանքի սահմանափակմանը: Այնուամենայնիվ, դա կալանավորի ընտանեկան կյանքը հարգելու իրավունքի բաղկացուցիչ մասն է, այդ իսկ պատճառով բանտի ղեկավարությունը պետք է աջակցի ընտանիքի հետ կապի պահպանմանը:

Եվրոպական Միության Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2013թ. հոկտեմբերի 22-ի դիրեկտիվայի 6-րդ հոդվածի համաձայն՝ «կասկածյալները և մեղադրյալները, որոնք զրկվել են ազատությունից, իրավունք ունեն առանց անհարկի

<sup>3</sup> Տե՛ս Fongum Gorji-Dinka v. Cameroon, Communication No. 1134/2002, U.N. Doc. CCPR/C/83/D/1134/2002 (2005)

<sup>4</sup> Տե՛ս Basic Principles for the Treatment of Prisoners. U.N. Doc. A/RES/45/111, 68th plenary meeting, 14 December 1990

<sup>5</sup> Տե՛ս Penal Reform International. p. 101 <https://www.penalreform.org/wp-content/uploads/2013/05/man-2001-making-standards-work-en.pdf>

հետաձգման հաղորդակցվելու իրենց կողմից ընտրված առնվազն մեկ երրորդ անձի հետ, օրինակ՝ մերձավոր ազգականի<sup>6</sup>:

Արտաքին աշխարհի հետ հաղորդակցվելու իրավունքի ապահովման երաշխիքը արտացոլված է անձի ընտանեկան կյանքը հարգելու իրավունքում: Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի 9-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ «մասնակից պետությունները հարգում են ծնողներից մեկից կամ երկուսից բաժանվող երեխայի իրավունքը՝ կանոնավոր անձնական հարաբերություններ և ուղղակի կապեր պահպանելու ծնողների հետ, բացառությամբ այն դեպքերի, երբ դա հակասում է երեխայի լավագույն շահերին»:<sup>7</sup>

Արտաքին աշխարհի հետ հաղորդակցվելու իրավունքը վերագրելի է քրեական դատավարության ցանկացած մասնակցին, ով գտնվում է որոշակի ժամկետով կամ անժամկետ անազատության մեջ: Եվրոպական Միության կողմից ընդունված կասկածյալների և մեղադրյալների դատավարական իրավունքների ամրապնդման վերաբերյալ չափորոշիչները<sup>8</sup> սահմանում են կասկածյալի կամ մեղադրյալի հաղորդակցվելու իրավունքը մերձավոր ազգականի, գործատուի և հյուպատոսական մարմինների հետ:

Հաշվի առնելով միջազգային իրավակարգավորումները, միջազգային դատարանների նախադեպային իրավունքը, գործող օրենսդրությունը և իրավակիրառ պրակտիկան՝ անհրաժեշտ է օրենսդրական փոփոխությունների ենթարկել ոչ միայն մեղադրյալների, այլ նաև կասկածյալների և դատապարտյալների իրավունքները ապահովող ազգային նորմերը: Այս իրավական մոտեցումը պայմանավորված է նաև ազգային օրենսդրության<sup>9</sup> և մարդու իրավունքների պաշտպանության մասին միջազգային պայմանագրերի<sup>10</sup> հիմքում ընկած հիմնարար սկզբունքի ապահովման անհրաժեշտությամբ, այն է՝ հավասարությունը օրենքի առջև:

<sup>6</sup> Տե՛ս Directive 2013/48/EU of the European Parliament and of the Council of 22 October 2013 on the right of access to a lawyer in criminal proceedings and in European arrest warrant proceedings, and on the right to have a third party informed upon deprivation of liberty and to communicate with third persons and with consular authorities while deprived of liberty: <http://eur-lex.europa.eu/legal-content/en/TXT/?uri=CELEX%3A32013L0048>

<sup>7</sup> Տե՛ս Convention on the Rights of the Child. Adopted by General Assembly resolution 44/25 of 20 November 1989 entry into force 2 September 1990. <http://www.ohchr.org/Documents/ProfessionalInterest/crc.pdf>

<sup>8</sup> Տե՛ս Resolution of the Council of 30 November 2009 on a Roadmap for strengthening procedural rights of suspected or accused persons in criminal proceedings. 2009/C 295/01. Measure D: Communication with Relatives, Employers and Consular Authorities. [http://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=uriserv:OJ.C\\_.2009.295.01.0001.01.ENG](http://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=uriserv:OJ.C_.2009.295.01.0001.01.ENG)

<sup>9</sup> Տե՛ս ՀՀ Սահմանադրության 28-րդ և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածները ամրագրում են օրենքի առաջ հավասարության սկզբունքը:

<sup>10</sup> Տե՛ս Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին Միջազգային դաշնագրի 26-րդ հոդված. «Բոլոր մարդիկ հավասար են օրենքի առաջ և, առանց որևէ խտրականության, ունեն օրենքի հավասար պաշտպանության իրավունք (...):»: Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 7-րդ հոդված.



Այսպիսով, համամիտ ենք Պաշտպանի կողմից ներկայացված այն առաջարկին, որով նախատեսվում է լրացնել Օրենսգրքի 65-րդ հոդվածի 2-րդ մասը նոր 9-րդ կետով, և առաջարկում ենք Օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ մասը նույնպես լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 9-րդ կետով.

«9<sup>1</sup>) արգելանքի տակ գտնվելու ընթացքում անարգել տեսակցել իր մերձավոր ազգականի և օրինական ներկայացուցչի հետ՝ բացառությամբ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերի»:

***Կալանավորված և ձերբակալված անձանց մերձավոր ազգականի և օրինական ներկայացուցչի հետ տեսակցության իրավունքի սահմանափակման վերաբերյալ***

Նախագծով առաջարկվում է Օրենսգրքը լրացնել նոր 153<sup>1</sup>-րդ հոդվածով հետևյալ բովանդակությամբ.

1. Բացառիկ դեպքերում, երբ բավարար հիմքեր կան ենթադրելու, որ մեղադրյալը կալանքի տակ գտնվելու ընթացքում *կիսոչընդոտի մինչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությանը, հանցագործությամբ պատճառված վնասի հատուցմանը կամ կզբաղվի հանցավոր գործունեությամբ*, դատախազը, ինչպես նաև դատախազի համաձայնությամբ՝ քննիչը կարող են պատճառաբանված միջնորդություն հարուցել դատարան՝ կալանավորված անձի տեսակցությունը մերձավոր ազգականի և օրինական ներկայացուցչի հետ արգելելու մասին:

2. Միջնորդություն հարուցելու որոշումը դատարան է ներկայացվում կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու դատախազի կամ քննիչի միջնորդության հետ միաժամանակ կամ առանձին՝ քրեական գործով վարույթի այլ պահի, երբ առկա են սույն հոդվածի առաջին մասում նշված հանգամանքները: Միջնորդություն հարուցելու որոշման մեջ պետք է շարադրվեն բոլոր այն հիմնավորումները, որոնց հիման վրա առաջացել է տվյալ դատավարական հարկադրանքի միջոցը կիրառելու անհրաժեշտություն:

«Օրենքի առաջ բոլոր մարդիկ հավասար են և առանց որևէ խտրության ունեն օրենքի հավասար պաշտպանության իրավունք: Բոլոր մարդիկ ունեն սույն Հռչակագիրը խախտող որևէ խտրականությունից և նման խտրականության սադրանքից պաշտպանվելու հավասար իրավունք»: Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի թիվ 12 Արձանագրության նախաբանում նշվում է. «այն հիմնարար սկզբունքը, ըստ որի բոլորը հավասար են օրենքի առջև և օրենքի համար պաշտպանության իրավունք ունեն»: Հիմնարար իրավունքների մասին Եվրոպական Միության խարտիայի 20-րդ հոդվածի համաձայն՝ «Բոլոր մարդիկ հավասար են օրենքի առաջ»



ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքի և Եվրոպական Միության կողմից քրեական դատավարության մասնակիցների՝ կասկածյալների և մեղադրյալների, իրավունքների ապահովման և պաշտպանության առանցքային երաշխիքների վերաբերյալ ընդունված իրավական ակտերի համաձայն՝ իրավունքների սահմանափակումները չեն կարող բացառապես հիմնվել հանցագործության տեսակի կամ դրա վտանգավորության աստիճանի վրա, ցանկացած սահմանափակման վերաբերյալ որոշում պետք է ընդունվի իրավասու մարմնի կողմից՝ գործի փաստական հանգամանքների անհատական գնահատմամբ: Այս դրույթը պահանջում է, որ նմանատիպ սահմանափակումները ընդունվեն միայն դատարանի պատճառաբանված որոշմամբ, ինչը նշանակում է, որ ոստիկանությունը կամ այլ իրավապահ մարմինը, որոնք ներպետական օրենսդրության և ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքով չեն համարվում որպես դատական իշխանություն, իրավասու չեն իրավունքների սահմանափակման վերաբերյալ որոշում կայացնելու<sup>11</sup>:

Որևէ ձևով ձեռքբերվող կամ կալանավորվող անձանց պաշտպանության<sup>12</sup> 19-րդ և 20-րդ սկզբունքների համաձայն.

19. Ձեռքբերված կամ կալանքի տակ գտնվող անձին մասնավորապես իրավունք է տրվում ընտանիքի անդամների այցելության և նրանց հետ նամակագրության, ինչպես նաև արտաքին աշխարհի հետ հարաբերություն ունենալ՝ օրենքի բովանդակված և օրենքին համապատասխան կանոններով սահմանված խելամիտ պայմանների ու սահմանափակումների համաձայն:

20. Ձեռքբերված կամ կալանքի տակ գտնվող անձի խնդրանքով նա պահվում է, եթե դա հնարավոր է, նրա բնակության սովորական վայրից խելամիտ հեռավորության վրա գտնվող ձեռքբերված կամ բանտարկության վայրում

Բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոնների 92-րդ կետի համաձայն՝ «կալանավորված անձի տեսակցությունը մերձավոր ազգականների և ընկերների հետ կարող է սահմանափակվել միայն արդարադատության պատշաճ իրականացման, անվտանգության պահանջների պահպանման և կալանավայրի բնականոն աշխատանքի ապահովման անհրաժեշտությամբ»:

«Եվրոպական բանտային կանոնների մասին» Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ (2006)2 հանձնարարականի (այսուհետ

<sup>11</sup> St' u Proposal for a DIRECTIVE OF THE EUROPEAN PARLIAMENT AND OF THE COUNCIL on the right of access to a lawyer in criminal proceedings and on the right to communicate upon arrest. /\*COM/2011/0326 final - COD 2011/0154\*/ <http://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=CELEX%3A52011PC0326>

<sup>12</sup> St' u Body of Principles for the Protection of All Persons under Any Form of Detention or Imprisonment. Adopted by General Assembly resolution 43/173 of 9 December 1988. <http://www.ohchr.org/EN/ProfessionalInterest/Pages/DetentionOrImprisonment.aspx>

Հանձնարարական) 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ ազատությունից զրկված անձանց նկատմամբ կիրառվող սահմանափակումը պետք է լինի այն նվազագույնը, որն անհրաժեշտ և համաչափ է դրա կիրառման իրավաչափ նպատակին:

Հանձնարարականի 1-ին մասի 6-րդ կետը կարևոր դրույթ է պարունակում, որի համաձայն ցանկացած կալանք պետք է կառավարել այնպես, որ դա նպաստի ազատազրկված անձանց՝ դեպի ազատ հասարակության վերդարձին:

Հանձնարարականի 2-րդ մասի 24.2-րդ կետը սահմանադրում է, որ հաղորդակցությունն ու տեսակցությունները կարող են ենթարկվել սահմանափակումների և մոնիտորինգի, որն անհրաժեշտ է քրեական գործի քննությունը շարունակելու, կարգուկանոնի պահպանման, ապահովության և անվտանգության, հանցագործության կանխարգելման և հանցագործությունից տուժածների պաշտպանության համար, սակայն այդ սահմանափակումները, այդ թվում՝ դատական մարմինների որոշումներով նախատեսված կոնկրետ սահմանափակումները, պետք է ցանկացած պարագայում թույլատրեն շփումների թույլատրելի նվազագույն մակարդակ<sup>13</sup>:

Եվրոպական միության իրավունքում նույնպես ամրագրվել են արտաքին աշխարհի հետ հաղորդակցվելու իրավունքի սահմանափակումները հետևյալ բովանդակությամբ.

Ցանկացած սահմանափակում

- ✓ պետք է լինի համաչափ և անհրաժեշտության սահմաններում,
- ✓ պետք է լինի խիստ սահմանափակ ժամանակով,
- ✓ չպետք է բացարձակապես հիմնված լինի հանցագործության տեսակի կամ վտանգավորության աստիճանի,
- ✓ չպետք է խոչընդոտի արդար դատաքննության իրականացմանը:

ՄԻԵԴ-ը Հորիչն ընդդեմ Լեհաստանի գործով նշել է, որ տեսակցությունների երկարատև սահմանափակումները արդարացնելու համար պետք է գոյություն ունենա անվտանգության այդպիսի իրական և շարունակական վտանգ: ՄԻԵԴ-ը եզրակացրեց, որ դիմումատուի տեսակցության իրավունքի վերաբերյալ իշխանությունների կողմից սահմանված սահմանափակումները չեն հանգեցրել «վտանգավոր կալանավոր» ռեժիմի պահանջների և ՄԻԵԿ-ով սահմանված ընտանեկան կյանքը հարգելու իրավունքի միջև հավասարակշռության պահպանմանը<sup>14</sup>:

<sup>13</sup> Տե՛ս ԵԽ Նախարարների կոմիտեի Թիվ (2006)2 հանձնարարականը Եվրոպայի խորհրդի անդամ պետություններին «Եվրոպական բանտային կանոնների մասին»: <https://rm.coe.int/16806f5b92>

<sup>14</sup> Տե՛ս The Case og Horych v. Poland, ECtHR Judgment of 17 April 2012 (Application 13621/08), para 130-132 <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-110440>





Եթե հղում կատարենք միջազգային հանցագործությունների կատարման համար մեղադրվող անձանց արտաքին աշխարհի հետ հաղորդակցվելու իրավունքի կարգավորումներին, ապա տեսակցությունները մերձավոր ազգականների, ընկերների և այլոց հետ ենթակա են այնպիսի սահմանափակումների և վերահսկման, որոնք անհրաժեշտ են արդարադատության իրականացման, անվտանգության ապահովման և կալանավայրում կարգուկանոնի պահպանման համար<sup>15</sup>:

Արտաքին աշխարհի հետ հաղորդակցվելու իրավունքի սահմանափակումը պետք է ունենա ընդհանուր կամ անհատական բնույթ՝ կախված անհրաժեշտության սահմաններից և պայմաններից: Եթե սահմանափակման հիմքը ազատագրված անձի ազգականի վարվելակերպն է կամ այն վտանգը, որը նա կարող է ներակայացնել, ապա հաղորդակցության ու տեսակցությունների սահմանափակումը պետք է տարածվի միայն տվյալ ազգականի վրա:

Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի դրույթներից սահմանափակումներ ու վերապահումներ անելու սիրակուզյան սկզբունքների համաձայն՝ իրավունքի սահմանափակումների շրջանակը չպետք է հակասի իրավունքի էությանը: Իրավունքի սահմանափակումները պետք է մեկնաբանվեն հստակ և ի օգուտ դիտարկվող իրավունքի: Սահմանափակումների կիրառման դեպքում պետությունը պետք է օգտագործի ոչ ավելի սահմանափակող միջոցներ, քան անհրաժեշտ է սահմանափակման նպատակին հասնելու համար<sup>16</sup>:

Մարդու իրավունքների միջազգային բիլլով սահմանված իրավունքների վերաբերյալ դրույթներում օգտագործվում է սահմանափակում<sup>17</sup> (restriction/limitation) եզրույթը, ինչպես նաև ՄԻԵԿ<sup>18</sup>-ում և ՄԻԵԴ<sup>19</sup>-ի նախադեպային իրավունքում: Մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները ենթակա են միայն այնպիսի սահմանափակումների, որոնք նախատեսված են օրենքով, անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում և հետապնդում են մեկ կամ ավելի իրավաչափ

<sup>15</sup> St'u International Tribunal for the Prosecution of Persons Responsible for Serious Violation of International Humanitarian Law Committed in the Territory of Former Yugoslavia since 1991. Rules Governing the Detention of Persons Awaiting Trial or Appeal before the Tribunal or Otherwise Detained on the Authority of the Tribunal of 21 July 2005. Rule 61, p. 18

<sup>16</sup> St'u Siracusa Principles on the Limitation and Derogation Provisions in the International Covenant on Civil and Political Rights 1985, p. 6. <http://icj.wppengine.netdna-cdn.com/wp-content/uploads/1984/07/Siracusa-principles-ICCPR-legal-submission-1985-eng.pdf>

<sup>17</sup> St'u Universal Declaration of Human Rights adopted by General Assembly resolution 217 A (III) of 10 December 1948, Article 29; International Covenant on Civil and Political Rights adopted by General Assembly resolution 2200 A (XXI) of 16 December 1966, Articles 5, 12, 18, 19, 21, 22, 25; International Convenat on Economic, Social and Culture Rights adopted by General Assembly resolution 2200 A (XXI) of 16 December 1966, Articles 4, 5, 8.

<sup>18</sup> St'u Convention for the Protection of Human Rights and Fundamental Freedoms 1950, Articles 9, 10, 18.

<sup>19</sup> St'u Enea v. Italy, ECtHR Judgment of 17 September 2009 (Application 74912/01), para140 <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-94072>

նպատակներ<sup>20</sup>: Մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները չեն կարող ամբողջությամբ արգելվել պետության կողմից. իրավունքների սահմանափակումները բացարձակ չեն: Այսպիսով, հիմք ընդունելով մարդու իրավունքների միջազգային իրավական պաշտպանության հայեցակարգը, *առաջարկում ենք Նախագծում օգտագործվող «իրավունքների արգելումը» փոխարինել «իրավունքների սահմանափակում» եզրույթով:*

*Առաջարկում ենք Նախագծով սահմանված Օրենսգրքի նոր 153' հոդվածի բովանդակությունը համապատասխանեցնել միջազգային չափորոշիչներին և շարադրել հետևյալ խմբագրությամբ.*

«Բացառիկ դեպքերում, հաղորդակցությունն ու տեսակցությունները կարող են ենթարկվել ընդհանուր կամ անհատական ժամանակավոր սահմանափակումների և վերահսկման, որը պետք է լինի այն նվազագույնը, որն անհրաժեշտ և համաչափ է քրեական գործի քննությունը շարունակելու, կարգուկանոնի պահպանման, անվտանգության, հանցագործության կանխարգելման և այլ անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության համար: Դատախազը, ինչպես նաև դատախազի համաձայնությամբ՝ քննիչը կարող են պատճառաբանված միջնորդություն հարուցել դատարան՝ կալանավորված անձի տեսակցությունը մերձավոր ազգականի և օրինական ներկայացուցչի հետ ժամանակավոր սահմանափակելու մասին»:

*Առաջարկում ենք Նախագծով սահմանված Օրենսգրքի նոր 153' հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 3-րդ մասով.*

«3. Կալանավորված անձը իրավունք ունի անարգել տեսակցելու իր անչափահաս երեխաների հետ, բացառությամբ այն դեպքերի, երբ դա հակասում է երեխայի լավագույն շահերին օրենքով սահմանված դեպքերում և կարգով»:

*Առաջարկում ենք Օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 133' հոդվածով.*

«Հոդված 133<sup>1</sup> . Ձերբակալված անձի տեսակցությունը մերձավոր ազգականի և օրինական ներկայացուցչի հետ սահմանափակելը

<sup>20</sup> St' u St' u Enea v. Italy, ECtHR Judgment of 17 September 2009 (Application 74912/01), para140 <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-94072>



1. Ձերբակալված անձի տեսակցությունը մերձավոր ազգականի և օրինական ներկայացուցչի հետ սահմանափակումները կատարվում են կալանավորված անձանց համար՝ սույն օրենսգրքի 153<sup>1</sup>-րդ, 153<sup>2</sup>-րդ, 153<sup>3</sup>-րդ, 153<sup>4</sup>-րդ հոդվածներով նախատեսված հիմքերով և կարգով»:

*Առաջարկում ենք «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի փետրվարի 6-ի ՀՕ-305 օրենքի 15-րդ հոդվածի 9-րդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.*

«Ձերբակալված և կալանավորված անձի իր մերձավոր ազգականի և օրինական ներկայացուցչի հետ տեսակցության սահմանափակումները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված հիմքերով և կարգով: Զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների և այլ անձանց հետ կալանավորված անձի տեսակցությունների սահմանափակումները կարգավորվում են ձերբակալված անձանց համար՝ սույն հոդվածով նախատեսված կարգով»:

***Կալանավորված և ձերբակալված անձանց մերձավոր ազգականի և օրինական ներկայացուցչի հետ տեսակցության իրավունքի երաշխիքների վերաբերյալ***

Նախագծով առաջարկվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքը լրացնել նոր 153<sup>3</sup>-րդ հոդվածով հետևյալ բովանդակությամբ.

1. Դատարանը կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու վերաբերյալ որոշում կայացնելու հետ միաժամանակ յուրաքանչյուր անգամ պետք է քննարկման առարկա դարձնի նաև տվյալ դատավարական հարկադրանքի միջոցի ժամկետի երկարացման շարունակման անհրաժեշտության և իրավաչափության հարցերը:

Գտնում ենք, որ կալանքի տակ գտնվող անձինք հնարավորություն պետք է ունենան բողոքարկելու դատարանի որոշումը, որով արգելվում է տեսակցությունը մերձավոր ազգականի և օրինական ներկայացուցչի հետ՝ որպես արդարադատության մատչելիության իրավունքի երաշխիք:

ՄԱԿ-ի կողմից մշակված ազատագրվածների դատական պաշտպանության իրավունքի վերաբերյալ հիմնական սկզբունքների և ուղենիշների համաձայն՝ (...)



ազատությունից զրկված ցանկացած անձ պետք է ունենա կալանավայրի պայմանների, ներառյալ խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի դեմ դատական պաշտպանության իրավունք:<sup>21</sup>

Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետությունում դատական բողոքարկման ընթացակարգի համատեքստում բանտարկյալները կարգապահական տույժի դեմ բողոքի հետ միասին ներկայացնում են նաև դիմում դատական ծախսերի վճարումներից ազատվելու նպատակով: Այսպես, չնայած օրենսդրությամբ դեռ սահմանված չէ, որ բանտարկյալները ազատվում են դատական հարկերից, բայց Celle Prison դեկավարության շնորհիվ բանտարկյալները ազատված են դատական ծախսերի վճարումից:

Հաշվի առնելով այն, որ բանտարկյալների համար չպետք է սահմանվեն ֆինանսական խոչընդոտներ կարգապահական տույժերի բողոքարկման համար, Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեի (այսուհետ՝ ԽԿԿ) պատվիրակությունը հորդորել է Գերմանիայի մնացած քաղաքների համապատասխան մարմիններին նույնպես վերացնել դատական ծախսերի վճարման իրավական պահանջը նմանատիպ վարույթների շրջանակներում<sup>22</sup>:

Գերմանիայում, Վրաստանում, Նիդերլանդներում, այլ երկրներում կարգապահական տույժի նշանակման վերաբերյալ որոշումները, ենթակա են դատական կարգով բողոքարկման: Որպես կարգապահական տույժ սահմանվում է մերձավոր ազգականների հետ հաղորդակցվելու իրավունքի սահմանափակումը<sup>23</sup>:

Հաճնարարականի 60.4-րդ կետի համաձայն՝ պատիժը չպետք է ներառի ընտանիքի հետ շփման բացարձակ արգելք: ԽԿԿ-ի պատվիրակությունը, իր գեկույցներում հղում կատարելով Հաճնարարականի սույն դրույթի վրա, բազմիցս նշել է, որ բանտարկյալների նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը չպետք է ընդհանուր արգելք դնի ազգականների հետ հաղորդակցվելու իրավունքի վրա և

<sup>21</sup> St'u Report of the Working Group on Arbitrary Detention United Nations Basic Principles and Guidelines on remedies and procedures on the right of anyone deprived of their liberty to bring proceedings before a court. P.17 <http://www.ohchr.org/Documents/Issues/Detention/DraftPrinciplesAndGuidelinesRightCourtReview.pdf>

<sup>22</sup> St' u Report to the German Government on the visit to Germany carried out by the European Committee for the Prevention of Torture and Inhuman or Degrading Treatment or Punishment (CPT) from 25 November 2015 to 7 December 2015. CPT/inf (2017) 13

<sup>23</sup> St'u Public Defender (Ombudsman) of Georgia. Natioanal Preventive Mechanizm. Bulletin№3(2005) p. 11-12; Article 51 of the Penitentiary Principles Act of the Netherlands. [https://ihl-databases.icrc.org/applic/ihl/ihl-nat.nsf/0/4dcca5be395ff03ec12577060033c97d/\\$FILE/Prisons%20Act.pdf](https://ihl-databases.icrc.org/applic/ihl/ihl-nat.nsf/0/4dcca5be395ff03ec12577060033c97d/$FILE/Prisons%20Act.pdf)

ցանկացած սահմանափակում կարող է կիրառվել միայն այն դեպքում, եթե հանցագործությունը անմիջականորեն կապված է տվյալ շփման հետ<sup>24</sup>:

Նորվեգիան և Ֆինլանդիան որդեգրել են այնպիսի քաղաքականություն, որի համաձայն կարգապահական տույժի արդյունքում իրավունքների կորուստը չի կարող խոչընդոտել բանտարկյալի շփումը արտաքին աշխարհի հետ<sup>25</sup>:

Որևէ ձևով ձերբակալված կամ կալանավորված բոլոր անձինք ունեն մարդասիրական վերաբերմունքի և մարդ անհատին բնորոշ արժանապատվության հարգման իրավունք<sup>26</sup>, որը պետք է պահպանվի նաև կարգապահական տույժի կիրառման դեպքում: Բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոնների համաձայն՝ կարգապահական զանցանքների համար իբրև պատժաձևեր պետք է արգելել մարմնական պատիժները, չլուսավորվող խցում բանտարկելը և պատժի դաժան, անմարդկային կամ մարդկային արժանապատվությունը ստորացնող ձևերի կիրառումը:

ՀՀ օրենսդիրը սահմանել է իրավունքների սահմանափակում և արժանապատվությունը նվաստացնող պայմաններ ազատազրկված անձանց համար պատժախցում գտնվելու ժամանակ<sup>27</sup>: Անհրաժեշտ է գործող օրենսդրությունում կատարել փոփոխություններ, որոնք ուղղված կլինեն վերացնելու պատժախցում գտնվելու ժամանակ ազատազրկված անձանց իրավունքների չհիմնավորված սահմանափակումները և արժանապատվությունը նվաստացնող ձևերի կիրառումը:

Հիմք ընդունելով սույն վերլուծության հիմքում ընկած դիրքորոշումը, որ *կասկածյալների, մեղադրյալների և դատապարտյալների նկատմամբ պետք է սահմանվեն հավասար պաշտպանության իրավունքներ և կարգապահական տույժը չպետք է հանգեցնի տեսակցության իրավունքի սահմանափակմանը և արժանապատվության նվաստեցմանը*, անհրաժեշտ է ինկորպորացնել նշված երկների իրավական ակտերի իրավակարգավորումները գործող օրենսդրությունում և Նախագծով առաջարկվող կալանավորված անձանց իրավունքների վերաբերյալ դրույթներում:

<sup>24</sup> St'u Report to the German Government on the visit to Germany carried out by the European Committee for the Prevention of Torture and Inhuman or Degrading Treatment or Punishment (CPT) from 25 November 2015 to 7 December 2015. CPT/inf (2017) 13, p. 36 <https://rm.coe.int/168071803e>

<sup>25</sup> St'u Imprisonment Act of Finland (767/2005) 4 § [http://www.vankeinhoito.fi/material/attachments/rise/saannokset-osanliitteet/6ION6IKW7/Vankeuslaki\\_-\\_Imprisonment\\_Act.pdf](http://www.vankeinhoito.fi/material/attachments/rise/saannokset-osanliitteet/6ION6IKW7/Vankeuslaki_-_Imprisonment_Act.pdf), Report to the Norwegian Government on the visit to Norway carried out by European Committee for the Prevention of Torture and Inhuman or Degrading Treatment or Punishment (CPT) from 18 to 27 May 2011. CPT/inf (2011) 33, p. 29 <https://rm.coe.int/1680697887>

<sup>26</sup> St'u Body of Principles for the Protection of All Persons under Any Form of Detention or Imprisonment. Adopted by General Assembly resolution 43/173 of 9 December 1988. <http://www.ohchr.org/EN/ProfessionalInterest/Pages/DetentionOrImprisonment.aspx>

<sup>27</sup> St'u «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդված; ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 52-րդ և 98-րդ հոդվածները



*Ելնելով վերոգրյալից առաջարկում ենք Նախագծով սահմանված Օրենսգրքի նոր 153<sup>Յ</sup> հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 2-րդ մասով .*

«2. Տեսակցությունյան իրավունքի սահմանափակումը կամ սահմանափակման միջնորդությունը մերժելու վերաբերյալ դատարանի որոշումը կարող է բողոքարկվել վերաքննիչ դատարան՝ որոշումն ստանալու պահից 5 օրվա ընթացքում»:

*Առաջարկում ենք «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի փետրվարի 6-ի ՀՕ-305 օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.*

«Պատժախցում գտնվելու ընթացքում կալանավորված անձի հաղորդակցությունները և տեսակցությունները մերձավոր ազգականի և օրինական ներկայացուցչի հետ կարող են սահմանափակվել միայն դատարանի որոշման հիման վրա օրենքով սահմանված դեպքերում և կարգով»:

***Դատապարտված անձանց տեսակցության իրավունքի վերաբերյալ***

Օրենսդրական փոփոխությունների փաթեթով չի կարգավորվում դատապարտյալների հաղորդակցվելու իրավունքը, սակայն գտնում ենք, որ վերհանված խնդիրը շատ ավելի խորքային է և պահանջում է համակարգային մոտեցում: Այն ճյուղավորված է իրավական այլ խնդիրներով, որոնք սահմանափակված չեն միայն կալանավորված անձի իրավական կարգավիճակով: Հիմնախնդիրն է ապահովել մինչդատական, դատական վարույթների և դատավճռի կատարման փուլերում ազատությունից զրկված անձանց արտաքին աշխարհի հետ հաղորդակցվելու իրավունքը: Նախագծով առաջարկվող օրենսդրական կարգավորումները կարող են կյանքի կոչվել միայն խնդրի բազմակողմանի լուծման դեպքում: Բացի այդ, ցանկացած օրենսդրական փոփոխության հիմքում պետք է ընկած լինի մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների համընդհանուր պաշտպանության սկզբունքը:

Կալանավորված անձանց իրավունքների մասին օրենսդրական առաջարկություններին կից պետք է վերանայել և փոփոխել ձերբակալված և դատապարտված անձանց վերաբերյալ օրենսդրական դրույթները:

Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 10-րդ և 17- րդ հոդվածների համաձայն.

**Հոդված 10.**



1. Ազատագրկված բոլոր անձինք ունեն մարդասիրական վերաբերմունքի և մարդկային անհատին ներհատուկ արժանապատվության հարգման իրավունք:
2. Պատժական համակարգով ձերբակալվածների համար նախատեսվում է ռեժիմ, որի էական նպատակը նրանց ուղղումն է և սոցիալական վերադաստիարակությունը:

### Հոդված 17.

1. Ոչ ոք չի կարող ենթարկվել քմահաճ կամ անօրինական միջամտության իր անձնական և ընտանեկան կյանքին, քմահաճ կամ անօրինական ոտնձգության իր բնակարանի անձեռնմխելիության կամ իր թղթակցության գաղտնիքի նկատմամբ, կամ էլ անօրինական ոտնձգության՝ իր պատվի ու հեղինակության նկատմամբ:
2. Յուրաքանչյուր մարդ ունի այդպիսի միջամտությունից կամ այդպիսի ոտնձգություններից օրենքի պաշտպանության իրավունք:

Բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն սատանդարտ կանոնների 37-րդ, 58-րդ և 59-րդ կետերի համաձայն.

37. Բանտարկյալներին պետք է հնարավորություն տալ ինչպես գրագրության կարգով, այնպես էլ այցելությունների ընթացքում, կանոնավոր ժամանակահատվածների ընդմիջումով և հարկ եղած վերահսկողության տակ կապ պահպանել իրենց ընտանիքների և անբասիր վարկ ունեցող ընկերների հետ:

58. Բանտարկության կամ ընդհանրապես ազատագրկման դատապարտելու նպատակն ու հիմնավորումը, վերջին հաշվով, հասարակության պաշտպանություն են և հասարակայնությանը սպառնացող հանցագործությունների կանխում: Այդ նպատակներին կարելի է հասնել սուսկ այն դեպքում, եթե ազատագրկման ժամկետն ավարտելով և հասարակության մեջ կանոնավոր կյանք վերադառնալով՝ իրավախախտը ոչ միայն պատրաստ է, այլև ունակ է ենթարկվել օրենսդրությանն ու ապահովել իր գոյությունը:

59. Այդ նպատակով հիմնարկը պետք է գործադրի բոլոր ուղղիչ, դաստիարակչական, բարոյական և հոգևոր ուժերն ու օգնության ձևերը, որոնց տիրապետում է և որոնք ինքը հարմար է գտնում, կիրառելով դրանք յուրաքանչյուր բանտարկյալի վերադաստիարակման պահանջները հաշվի առնելով:

Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքի 50-րդ հոդվածի համաձայն.



Կարգապահական գումարտակում դատապարտյալն իրավունք ունի ամսական առնվազն երկու կարճատև տեսակցության: Դատապարտյալին տրամադրվում են տեսակցություններ պաշտպանի հետ՝ առանց քանակի և տևողության սահմանափակման:

Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքի 92-րդ հոդվածի համաձայն.

Մերձավոր ազգականների կամ այլ անձանց հետ կարճատև տեսակցություն տրամադրվում է ամսվա ընթացքում առնվազն մեկ անգամ՝ մինչև չորս ժամ տևողությամբ, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Համատեղ բնակվելու իրավունքով և միայն մերձավոր ազգականների հետ երկարատև տեսակցություն տրամադրվում է երկու ամսվա ընթացքում առնվազն մեկ անգամ՝ մինչև երեք օր տևողությամբ: Երկարատև տեսակցություն տրամադրվում է նաև դատապարտյալի հետ ամուսնության մեջ չգտնվող այն անձի հետ, որի հետ դատապարտյալն ունի համատեղ երեխա: Դատապարտյալի խնդրանքով երկարատև տեսակցությունը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի կարող է փոխարինվել կարճատև տեսակցությամբ: Առանձնապես ծանր հանցագործության համար որոշակի ժամկետով ազատազրկման կամ ցմահ ազատազրկման դատապարտված անձանց տրամադրվում է տարվա ընթացքում առնվազն երեք կարճատև և մեկ երկարատև տեսակցություն: Նշված սահմանափակումը վերանում է, եթե դատապարտյալը փաստացի կրել է պատժի՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատում կիրառելու համար սահմանված ժամկետը: Կարճատև և երկարատև տեսակցություններ տրամադրելու կարգը սահմանվում է ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգով:

Ազգային և միջազգային իրավակարգավորումների ուսումնասիրության և վերլուծության հիման վրա, կարող ենք եզրահանգել, որ դատապարտյալների արտաքին աշխարհի հետ հաղորդակցվելու իրավունքի օրենսդրական նորմերը տարաբնույթ են՝ կախված դատավճռով սահմանված պատժի տեսակից և ռեժիմից:

ՀՀ օրենսդիրը սահմանել է տեսակցությունների թվի նվազագույն շեմը, որից կարող են օգտվել ազատազրկվածները, բայց համեմատական անցկացնելով կարգապահական գումարտակում պահվող դատապարտյալների, որոշակի ժամկետով կամ ցմահ ազատազրկման դատապարտված և առանձնապես ծանր հանցագործության համար որոշակի ժամկետով ազատազրկման կամ ցմահ ազատազրկման





դատապարտված անձանց տրամադրվող տեսակցությունների նվազագույն թվերի միջև, ապա ակնհայտ է դառնում, որ որոշ անձանց ընտանեկան կյանքը հարգելու իրավունքը համեմատաբար ավելի պաշտպանված է պետության կողմից, ինչը չենք կարող ասել առանձնապես ծանր հանցագործության համար որոշակի ժամկետով ազատազրկման կամ ցմահ ազատազրկման դատապարտված անձանց մասին:

ՄԻԵԴ-ը և ԽԿԿ-ի պատվիրակությունը բազմիցս նշել են տեսակցությունների կարևորությունը ազատությունից զրկված անձանց համար, որպես հասարակությունում վերինտեգրվման բաղկացուցիչ մաս, որպես ՄԻԵԿ-ի 8-րդ հոդվածով երաշխավորվող իրավունքների արդյունավետ իրականացում:

Քրեակատարողական համակարգը պետք է լինի ոչ միայն պատժողական, այն էապես պետք է ձգտի բարեփոխմանը և բանտարկյալների սոցիալական վերինտեգրմանը:<sup>28</sup>

Եվրոպայի Խորհրդի և Եվրոպական Միության իրավունքների այն պահանջը, որ կարգապահական տույժի նշանակումը չպետք է հանգեցնի տեսակցության իրավունքի արգելքին, եթե միայն այն պայմանավորված չէ հանցագործության կամ դրա վտանգի առկայությամբ, նույնպես պահանջված չէ գործող օրենսդրությունում<sup>29</sup>:

Բանտերի ղեկավարության կողմից ցմահ և երկարաժամկետ այլ ազատազրկման դատապարտված բանտարկյալների հետ աշխատանքների մասին Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ (2003)23 հանձնարարականի 22-րդ կետի համաձայն՝ անհրաժեշտ է հատուկ ջանքեր գործադրել ընտանեկան կապերի փլուզումը խափանելու համար: Այս նպատակով բանտարկյալները պետք է տեղավորվեն այն կալանավայրերում, որոնք առավելագույնս մոտիկ են գտնվում բանտարկյալի մերձավոր ազգականի կամ այլ բարեկամի բնակության վայրին: Նամակագրությունը, հեռախոսազանգերը և տեսակցությունները պետք է թուլատրվեն հնարավոր առավելագույն հաճախականությամբ և գաղտնիության պայմաններում: Եթե սույն դրույթները վտանգում են անվտանգությունը և այն արդարացված է վտանգի գնահատմամբ, ապա տեսակցությունները և այլ շփումը արտաքին աշխարհի հետ կարող են ուղեկցվել ողջամիտ անվտանգության միջոցներով, ինչպիսիք են՝ նամակագրության մոնիտորինգ, տեսակցությունից առաջ և հետո ստուգումների անցկացում<sup>30</sup>:

Երկարաժամկետ դատապարտված բանտարկյալների վրա ինստիտուցիոնալացման բացասական ազդեցության հետևանքները նվազեցնելու և

<sup>28</sup> St' u Human Rights Committee General Comment No. 21. Article 10. Adopted: 10 April 1992 forty-fourth session. HRI/GEN/1/Rev. 9 (Vol. I). p.2

<sup>29</sup> St' u ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 52-րդ, 56-րդ, 98-րդ հոդվածները

<sup>30</sup> St' u Recommendation Rec (2003)23 of the Committee of Ministers to member states on the management by prison administrations of life sentence and other long-term prisoners. <http://pjp-eu.coe.int/documents/3983922/6970334/CMRec+%282003%29+23+on+the+management+of+life+sentence+and+other+long+term+prisoners.pdf/bb16b837-7a88-4b12-b9e8-803c734a6117>



բանատարկյալներին հասարակությունում վերաինտեգրման ուղղորդման համար, անհրաժեշտ է արդյունավետ պահել բանտարկյալների կապը արտաքին աշխարհի հետ: Բացի այդ, պետք է սահմանել անհատական հիմունքներով բաց տեսակցությունների հնարավորություն<sup>31</sup>:

ԽԿԿ-ի պատվիրակությունը ազատագրկման վայրերի այցելությունների ժամանակ բացասական է գնահատել ցմահ և երկարաժամկետ այլ ազատագրկման դատապարտված բանտարկյալների իրավիճակը՝ կապված նյութական պայմանների, զբաղվածության, արտաքին աշխարհի հետ հաղորդակցվելու հնարավորության հետ: Ցմահ և երկարաժամկետ այլ ազատագրկման դատապարտված բանտարկյալները ընթարկվում են հատուկ սահմանափակումների, որոնք հավանաբար կարող են իրենց ազդեցությամբ խորացնել վնասակար հետևանքները, որոնք բնորոշ են երկարաժամկետ կալանքին: Նման սահմանափակումների օրինակներն են՝ բաժանումը այլ բանտարկյալներից, այլ բանտարկյալների հետ հաղորդակցվելու արգելումը, սահմանափակ թվով այցերի հնարավորություն: ԽԿԿ-ի պատվիրակությունը նշել է, որ նմանատիպ հատուկ սահմանափակումների հիմքում ընկած է տարբերակված մոտեցումը՝ ըստ դատավճռով սահմանված պատժատեսակի, առանց անհատական վտանգների գնահատման, որոնք բանտարկյալները կարող են կամ չեն կարող ներկայացնել<sup>32</sup>:

Մի շարք երկրներում տեսակցությունների օրենսդրական կարգավորումները նույնաբովանդակ են բոլոր բանտարկյալների համար, այդ թվում ցմահ և երկարաժամկետ այլ ազատագրկման դատապարտված բանտարկյալների համար: Ադրբեջանում, Բուլղարիայում, Լիտվայում, Լեհաստանում, Սերբիայում և Թուրքիայում որոշ բանտարկյալներ, մասնավորապես ցմահ և երկարաժամկետ այլ ազատագրկման դատապարտվածները կարող են ենթարկվել հետագայում սահմանափակումների կապված տեսակցությունների հաճախականության և տևողության հետ: Ավստրիայում, Բելգիայում, Ֆինլանդիայում, Հունաստանում, Իռլանդիայում, Մալթայում, Մոնտենեգրոյում, Նիդեռլանդում, Պորտուգալիայում, Սլովենիայում, Իսպանիայում և Շվեյցարիայում ընտանեկան տեսակցությունները թույլատրվում են շաբաթը մեկ: Բուլղարիայում, Խորվաթիայում, Մակեդոնիայի Հանրապետությունում, Լեհաստանում, Ռումինիայում, Միացյալ Թագավորությունում թույլատրվում է ամսվա մեջ երկու տեսակցության հնարավորություն: Իտալիայում տեսակցությունների թիվը ամսվա մեջ հասնում է մինչև 6-ի: Ադրբեջանում, որտեղ այցելությունների թիվը կախված է պատիժը կրելու այն ռեժիմից, որը սահմանված է Ադրբեջանի քրեական օրենսգրքով, ցմահ

<sup>31</sup> St' u Memorandum of the European Committee for Prevention of Torture and Inhuman or Degrading Treatment or Punishment of 27 June 2007. CPT (2007)55

<sup>32</sup> St' u European Committee for Prevention of Torture and Inhuman or Degrading Treatment or Punishment. Development concerning CPT standards in respect of imprisonment. Extract from the 11<sup>th</sup> General Report of the CPT, published in 2001. <https://rm.coe.int/16806cd24c>

դատապարտված բանտարկյալներին թույլատրվում է տարեկան վեց անգամ այցելություններ կատարել<sup>33</sup>:

ՄԻԵԴ-ը՝ արտաքին աշխարհի հետ հաղորդակցվելու իրավունքի հնարավոր խախտումների վերաբերյալ գործերը նայելիս, նշել է, որ ՄԻԵԿ-ով սահմանված իրավունքների պաշտպանության հետ կապված որևէ հարց չի առաջացել, երբ հատուկ ժամանակավոր ռեժիմի կիրառման արդյունքում դատապարտյալի համար նախատեսված տեսակցությունների թիվը կրճատվել է ամսվա կտրվածքով մինչև 2-ի: Այս դեպքում ազգային իշխանությունները և ՄԻԵԴ-ը հաշվի են առել հստակ նկատառումներ, որոնց հիմքում ընկած էին սահմանափակումները:<sup>34</sup>

Ներպետական իրավունքի նորմերի տարբերակված կարգավորումները, որոնք սահմանափակումներ են նախատեսում ցմահ դատապարտված բանտարկյալների տեսակցությունների հաճախականության և տևողության վրա, և չեն նախատեսում սահմանափակումների կիրառման համար որևէ ճկուն համակարգ, որը հնարավորություն կստեղծեր գնահատելու սահմանափակումների հիմքում ընկած անհրաժեշտ և համապատասխան հիմքերը, ՄԻԵԴ-ի կողմից բազմիցս դիտարկվել է որպես խնդիր, որին անդամ պետությունները պետք է լուծում տան: ՄԻԵԴ-ը գտնում է, որ պետությունները պետք է մշակեն սահմանափակումների համաչափության գնահատման մեթոդ, որը հնարավորություն կտա ներպետական մարմիններին հավասարակշռության մեջ պահել անհատական և հասարակական շահերը՝ հաշվի առնելով յուրաքանչյուր գործի առանձնահատկությունները<sup>35</sup>:

ԽԿԿ-ի պատվիրակությունը Հայաստան կատարած այցի վերաբերյալ իր զեկույցում նշել է, որ Հայաստանում գործող այն համակարգը, որի համաձայն բանտարկյալների արտաքին աշխարհի հետ հաղորդակցության աստիճանը որոշվում է դատավճռով սահմանված պատժի տեսակից և պատժի կրման ռեժիմից, սկզբունքորեն սխալ է: ԽԿԿ-ի պատվիրակության կարծիքով բոլոր բանտարկյալները անկախ պատժից և ռեժիմից, պետք է ունենան շաբաթական առնվազն մեկ ժամ տեսակցության իրավունք: Ցանկալի է, որ բանտարկյալն ունենան տեսակցություններ ամեն շաբաթ: Հնարավորություն պետք է ընձեռվի, որ բանտարկյալներն ունենան կուտակվող տեսակցությունների իրավունք այն ժամանակահատվածի համար, որի ընթացքում այցեր չեն եղել<sup>36</sup>: ԽԿԿ-ի պատվիրակության կողմից նշվել է այն փաստը, որ ցմահ

<sup>33</sup> St'u The Case of Khoroshenko v. Russia, ECtHR Judgment of 30 June 2015 (Application 41418/04), para 81-84 <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-156006>

<sup>34</sup> St'u The Case of Messina v. Italy (No. 2), ECtHR Judgment of 28 September 2000 (Application 25498/94), para 62-74. <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-58818>

<sup>35</sup> St'u The Case of Torosin v. Ukraine, ECtHR Judgment of 23 February 2012 (Application 39758/05), para 42-44

<sup>36</sup> St'u Report to the Armenian Government on the visit to Armenia carried out by the European Committee for the Prevention of Torture and Inhuman or Degrading Treatment or Punishment (CPT) from 5 October to 15 October 2015. CPT/inf (2016) 31, p.



դատապարված բանտարկյալների տեսակցությունների թիվը զգալիորեն ցածր է համեմատած այլ բանտարկյալների հետ, և հորդորեց ՀՀ իշխանություններին համապատասխան օրենսդրական փոփոխություններ կատարել, որոնք կնախատեսեն տեսակցությունների թվի հավասար բաշխումը բոլոր դատապարտյալների միջև: Ցմահ ազատազրկման դատապարտված անձինք պետք է ունենան բաց պայմաններում կարճատև տեսակցությունների իրավունք, կարող են սահմանվել փակ տեսակցություններ՝ անվտանգության անհատական գնահատմամբ:

Այսպիսով, հիմնվելով միջազգային իրավունքի գործիքների, միջազգային դատարանների նախադեպային իրավունքի, կոնվենցիոն մարմինների իրավական դիրքորոշումների և քրեակատարողական համակարգում այլ երկրների փորձից, որը միտված է բոլոր բանտարկյալների համար սահմանել արտաքին աշխարհի հետ հաղորդակցվելու իրավունքի նվազագույն ստանդարտներ, առանց որևէ տարբերական՝ ցմահ և երկարաժամկետ այլ ազատազրկման դատապարտված բանտարկյալների և առանձնապես ծանր հանցագործության համար որոշակի ժամկետով ազատազրկման կամ ցմահ ազատազրկման դատապարտված անձանց միջև, *առաջարկում ենք Հայաստանի Հանրապետության 2004 թվականի դեկտեմբերի 24-ի քրեակատարողական օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 15<sup>1</sup> հոդվածով.*

**«15<sup>1</sup> հոդված. Դատապարտված անձի տեսակցությունը մերձավոր ազգականի և օրինական ներկայացուցչի հետ արգելելը**

1. Բացառիկ դեպքերում, հաղորդակցությունն ու տեսակցությունները կարող են ենթարկվել ընդհանուր կամ անհատական ժամանակավոր սահմանափակումների և վերահսկման, որը պետք է լինի այն նվազագույնը, որն անհրաժեշտ և համաչափ է քրեական գործի քննությունը շարունակելու, կարգուկանոնի պահպանման, անվտանգության, հանցագործության կանխարգելման և այլ անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության համար: Պատիժը կատարող մարմինը կամ հիմնարկի ղեկավարը կարող են պատճառաբանված միջնորդություն հարուցել դատարան՝ դատապարտված անձի տեսակցությունը մերձավոր ազգականի և օրինական ներկայացուցչի հետ ժամանակավոր սահմանափակելու մասին:
2. Դատապարտված անձը իրավունք ունի անարգել տեսակցելու իր անչափահաս երեխանների հետ, բացառությամբ այն դեպքերի, երբ դա հակասում է երեխայի լավագույն շահերին, օրենքով սահմանված դեպքերում և կարգով:
3. Դատապարտված անձի իր մերձավոր ազգականի և օրինական ներկայացուցչի հետ տեսակցության սահմանափակումը կատարվում է կալանավորված անձանց



համար՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգով»:

*Առաջարկում ենք ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 92-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.*

«Մերձավոր ազգականների կամ այլ անձանց հետ կարճատև տեսակցություն տրամադրվում է *ամսվա ընթացքում չորս անգամ՝ առնվազն մեկ ժամ տևողությամբ և մեկ երկարատև տեսակցություն, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի*: Համատեղ բնակվելու իրավունքով և միայն մերձավոր ազգականների հետ երկարատև տեսակցություն տրամադրվում է երկու ամսվա ընթացքում առնվազն մեկ անգամ՝ երեք օր տևողությամբ: Երկարատև տեսակցություն տրամադրվում է նաև դատապարտյալի հետ ամուսնության մեջ չգտնվող այն անձի հետ, որի հետ դատապարտյալն ունի համատեղ երեխա: Դատապարտյալի խնդրանքով երկարատև տեսակցությունը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի կարող է փոխարինվել կարճատև տեսակցությամբ: Կարճատև և երկարատև տեսակցություններ տրամադրելու կարգը սահմանվում է ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգով»:

*Առաջարկում ենք սահմանել տեսակցությունների կուտակային համակարգ*

*Առաջարկում ենք ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 98-րդ հոդվածի 1-ի մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.*

«Պատժախցում գտնվելու ընթացքում դատապարտյալի հաղորդակցությունները և տեսակցությունները մերձավոր ազգականի և օրինական ներկայացուցչի հետ կարող են սահմանափակվել միայն դատարանի որոշման հիման վրա օրենքով սահմանված դեպքերում և կարգով»:

*Առաջարկում ենք ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 52-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.*

«Կարգապահական կալանք կրելու ժամանակամիջոցում դատապարտյալի հաղորդակցությունները և տեսակցությունները մերձավոր ազգականի և օրինական ներկայացուցչի հետ կարող են սահմանափակվել միայն դատարանի որոշման հիման վրա օրենքով սահմանված դեպքերում և կարգով»:



*Առաջարկում ենք ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 56-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ նախադասությունները հանել և լրացնել նոր նախադասությունով.*

«Դատապարտյալի հաղորդակցությունները և տեսակցությունները մերձավոր ազգականի և օրինական ներկայացուցչի հետ կարող են սահմանափակվել միայն դատարանի որոշման հիման վրա օրենքով սահմանված դեպքերում և կարգով»:

*Առաջարկում ենք ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 1543-Ն որոշմամբ հաստատված հավելվածի XVI-րդ գլխի 137-րդ կետի երկրորդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.*

«Կալանավորված անձի և դատապարտյալի մերձավոր ազգականի և օրինական ներկայացուցչի հետ տեսակցությունը կարող է սահմանափակվել միայն դատարանի որոշման հիման վրա: Մինչև դատարանի համապատասխան որոշումը ստանալը անձին տեսակցության տրամադրումը չի կարող արգելվել:»